Յաւելուած՝ † ԱԼԻՇԱՆ Հ. Ղ. Մ.

ՆՐԻՄ. Հ. Ս. — Նորութիւններ . . . 385
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Այլասերումն . . . 389
ՆՐԻՄ. Հ. Ս. — Հայ բժշկարանք – ՎԵՐՋ . 393
ՕՍՍԻԱՆ. — Փինգալ. թրգմ. Հ. ԱՐՍԷՆ ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . 396
ՋՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Րաֆֆի . . . . 402
» » . — Գամառ-Քաթիպայ . . 406
Հռոմայ աւարառութիւնը Գոթաց ազգէն 410 տարւոյն մէջ . . . . . 410
H. F. B. LYNCH. — Տրապիզոն և Ախլցխա թրգմ. ՍԱՐԵԱՆ Հ. Ս. . . . . . 413
Ա. ՊՈՑԻԹՈՑ. — Ներոն. թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . 417
ՏԻՐԱՑՈՒԵԱՆ Հ. Ն. — Վիրխոֆ ուսուցչապետին յոբելեանը . . . . . 428
ՆՐԻՄ. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից . . 430

## ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ*

110. Յաջորդ «Գեղունին» պիտի զարդարուի Ուխտիս բազմարդիւն և ազգիս պաշտելի հանգուցեալ Ալիշան վարդապետի զանազան պատկերներով։ — Հրատարակուած է «Գեղունի»ի առաջին պրակը զոր ստացած են միայն անոնք, որոնք կանխեցին յղեցին կանխիկ գինը որ «Բազմավէպ»ի բաժանորդաց համար 1 ֆրանք է (իբրեւ ճանապարհի ծախք), իսկ ոչ բաժանորդաց համար 3 ֆրանք է (Nota bene) **կանխիկ**։

111. Պ. Գ. Ջալխուշեան որ Գամառ-Քաթիպայի մահարձանը կանգնելուն համար մեծ արդիւնք ունի, Միաբանութեանս հասցէին յղած է նոյն բանաստեղծի մահարձանին մեծադիր գեղեցիկ լուսանկարը։ «Մշակ»էն ինչ որ կը լսենք նախ երկու լուսանկար առնուած է, որոնցմէ մին վեհ. Հայրիկին և միւսը մեզ յղուած է։ Շնորհակալութիւն հրապարակաւ։

112. Դավրէժ քաղաքին մաքստան վերաքննիչ Մեծ. Պ. Մկրտիչ Երեմեան «Գեղունի» պատկերազարդ հայաթերթիս համար, հարիւրի չափ տեղական կարեւոր ընտիր տեսարաններ, կենդանագիրներ և տարազներ յղած է. որոցմէ չորսը դեռ նոր լոյս տեսան։ Այս առթիւ խմբագրութիւնս Մեծ. Պարոնին խորին շնորհակալութիւն կը յայտնէ։

113. Ադրիանուպոլսեցի՝ Փառաւոր մեր ուսանողներէն Պ. Մկրտիչ Պասմաճեան ճարտարապետական ուսմանց ընթացքն աւարտելով, գափնեպսակի արժանացեր է. այս Պարոնը «Բազմավէպ»ի ընթերցողաց արդէն ծանօթ է երգիծաբան Պարոնեանի վրայ հրատարակած ընտիր ուսումնասիրութեամբն ։ Խնդակցութիւննիս։

114. Պ. Մ. Փորթուգալեանի թերթէն կ՚առնունք հետեւեալ լուրը. «Մխիթար Աբբահօր երկհարիւրամեակին առթիւ Պարսկաստանի Դավրէժ քաղաքին մէջ մի քանի ազգայիններ Վսեմ. Խաչիկ Խան Սարաճեանի նախաձեռնութեամբ հանգանակութիւն կատարելով՝ 15 անգղ. ոսկի ղրկեր են Կիպրոսի Ազգային կրթարան Որբանոցին, որպէս զի ի յիշատակ Մխիթար Աբբահօր անոր անունով որբ մը կրթուի այն տեղ։ — Փափաքելի է որ այս օրինակը հետեւողներ ունենայ, թէ Յոբելեանին յիշատակը պատուելու և թէ Կիպրոսի հաստատութիւնը քաջալերելու համար։ Այդ Կրթական Որբանոցին մէջ սան որդեգրողներէն տարեկան 10 անգղ. ոսկի կը պահանջուի կանոնագրին համեմատ»։ — Այս միեւնոյն թերթին մէջ ուսումնասէր Մ. Յ. Սէթեանց յոբելեար Յովհ. Լազարեանի վրայ համառօտ բայց գեղեցիկ յօդուած մը հրատարակած է։ Պէտք է նկատի առնել, որ «Արմէնիա» այժմ իր յօդուածները աւելի խնամքով կը մշակէ և բազմակողմանի հեռագրական տեղեկութեամբ զարդարուած լոյս կը տեսնէ կանոնաւոր։

115. Կարնոյ մէջ Հոկտեմբեր 24էն (Հ. Տ.) սկսեալ մի քանի օր սաստիկ ու մեղմ ընդհատ երկրաշարժ պատահելով մեծ վնասներ պատճառներ, բաւական շէնքեր, փլեր ու վնասուեր են. Կաթուղիկէ Հայոց եկեղեցին բոլորովին կործանուեր է։ Ժողովուրդը ահարեկ բացօթեայ ձիւնին ու ցուրտին մէջ կը տանջուի. տեղացի ազգայնոց օգնութեան հասնելը անհրաժեշտ է։

116. Ուսումնասէր Պ. Ռ. Պէրպէրեան իր հիմնած վարժարանի քսանըհինգամեայ յոբելեանը՝ Նոյեմբեր 28ին (Հ. Տ.) կատարեց։ Ազգը պարտ ու պատշաճ երախտագիտութիւն ցոյց տուաւ. հեռագրով, նամակներով և նիւթական նուէրներով պսակեց արդիւնաւոր դաստիարակին քսանըհինգամեայ գործունէութիւնը։ «Բազմավէպ»ի խմբագրութիւնս փութայ հեռագրով շնորհաւորել մեծ. յոբելեարը։ Պ. Պէրպէրեան ըստ լրագրաց իբր նուէր ընդուներ է 1098 օսմ. ոսկի։

117. Կաթուղիկէ Հայ հասարակութեան մէջ, եպիսկոպոսութեան աստիճան ընդուներ են Գաղատիոյ առաջնորդ Կղեմէս Վ. Ղազարոսեան, Եգիպտոսի առաջնորդ Պօղոս Վ. Սապպաղեան, Կեսարիոյ առաջնորդ Մատթէոս Վ. Սիւլեան։

118. Կ. Պոլսոյ մէջ «Ծաղիկ» անուամբ օրագիրը վերսկսած է լոյս տեսնել. արտոնա-

---

* Շար. տես նոյեմբեր 1901։


digitised by ARAR@